Երկրորդ անգամ դիմում ենք ռազմական մեկնաբան Big Serge-ի վերլուծությանը՝ մեջբերելով նրա նյութը, բացառությամբ Առաջին աշխարհամարտի մասին պատմական նախաբանի:

TOTAL KIEVAN DEBELLATION
(Կիևի պարտությունը)
Ռուս-ուկրաինական պատերազմի երրորդ տարին

…

Պատերազմը երրորդ լիարժեք ձմեռն է բոլորում՝ փետրվարին կլրանա Z-աշխարհի երեք տարին: Մենք հեղեղված ենք տեղեկատվությամբ, որոնք հետևում են մի քանի տասնյակ մետր առաջխաղացման ամենօրյա թարմացումներով, խաղի կանոնները փոխող նոր զենքերի անվերջանալի գովեստով (որոնք, կարծես, աննշան փոխություններ են կրում) և «կարմիր գծերի» մասին գլուխգովանքով: Այս պատերազմը, կարծես, անփոփոխ դինամիկա ունի տեղերում, և անկախ նրանից, թե որքան ամպագոռգոռ հայտարարություններ ենք լսում այս կամ այն կողմի փլուզման եզրին լինելու մասին, երկայնաձիգ ճակատի մսաղացը շարունակում է աղալ մարդկանց մարմինները և սուզվել արյունալի դիրքային մարտերի մեջ:

Թվում է, թե դժվար է հավատալ, որ Եվրոպայում բարձր ինտենսիվությամբ ցամաքային պատերազմը, ունենալով հարյուրավոր մղոններ ձգված ճակատ, կարող է **ձանձրալի** լինել, սակայն հակամարտության ստատիկ և կրկնվող բնույթը

դժվարեցնում է օտարերկրյա դիտորդների ուշադրությունը գրավելը, ովքեր այս պահին վտանգված քիչ բան ունեն:

Իմ նպատակն է արմատապես հրաժարվել այս բարոյալքող և հոգնեցնող փոքրածավալ թարմացումներից (որքան էլ արժեքավոր լինեն ռազմական քարտեզագրողների աշխատանքները) և վերանայել 2024 թվականի արդյունքները՝ պնդելով, որ այս տարին իրականում շատ կարևոր էր: Ընդհանուր առմամբ, 2024 թվականին տեղի ունեցան երեք շատ կարևոր իրադարձություններ, որոնք 2025 թվականին առավել մռայլ հեռանկարներ կստեղծեն Ուկրաինայի և նրա զինված ուժերի համար: Այսպիսով, 2024 թվականին տեղի ունեցան երեք կարևոր ռազմավարական իրադարձություն:

1. Ռուսաստանի հաղթանակը հարավդոնեցկյան հատվածում, որը կործանեց Ուկրաինայի զինված ուժերի դիրքերը պատերազմի առանցքային ռազմավարական ուղղություններից մեկում:

2. Կուրսկի ուղղությամբ անհաջող հարձակման համար փութաջան հավաքված ուկրաինական ռեսուրսների մսխումը, որն արագացրեց ուկրաինական կարևոր մաննրային միջոցների սպառումը և զգալիորեն վատթարացրեց նրանց հեռանկարները Դոնբասում:

3. ՆԱՏՕ-ի նոր հարվածային համակարգեր կուտակելու ուկրաինական ներուժի սպառումը: Լայն իմաստով, Արևմուտքը հիմնականում սպառել է ուկրաիանական ներուժը արդիականացնելու իր հնարավորությունները, իսկ առավել մեծ հեռահարությամբ գործող համակարգերի գովաբանված մատակարարումը չի փոխել պատերազմի հետագիծը:

Ընդհանրապես, 2024 թվականը ցույց տվեց, որ ուկրաինական բանակի ուժերն հասնելով վերջնակետին այնքան երկարաձգվեցին, որ ռուսները կարողացան մեծամասամբ պոկել ռազմաճակատի մի ամբողջ հատված: Մարդիկ շարունակում են մտածել, թե որտեղ և երբ կարող է ճեղքվել ուկրաինական ճակատ:.Ես կասեի, որ վերջին մի քանի ամիսների ընթացքում այն իսկապես ճեղքվել է հարավում, և 2025 թվականին կսկսվի ռուսասական հզոր հարձակումը, որը զգալի ջանքեր կպահանջի ուկրաինացիներից այն կանգնեցնելու համար:

Ռազմաճակատի կոլապսը Դոնեցկի հարավում

Ի՞նչն էր անմիջապես աչքի զարնում 2024 թվականի օպերատիվ իրադարձությունների ընթացքում, դա ուժերի նկատելի տեղաշարժն էր այն մարտական գործողությունների ուղղություններից, որոնցում պատերազմի առաջին երկու տարիներին առավել կատաղի մարտեր էին ընթանում: Ինչ-որ իմաստով, այս պատերազմում յուրաքանչյուր ճակատ ակտիվացավ հաջորդաբար, մեկը մյուսի հետևից:

Ռուսական հարձակման մեկնարկից հետո, որի հիմնական հաջողությունը Ազովի ափի գրավումն էր և Դոնեցկի ու Ղրիմի միջև կապի ստեղծումը, գործողությունները տեղափոխվեցին հյուսիսային ճակատ (Լուգանսկ-Խարկով առանցք), որտեղ Ռուսաստանը իրականացրեց ամառային հարձակումը, գրավելով

Սեվերոդոնեցկը և Լիսիչանսկը: Դրան հաջորդեցին աշնանային ուկրաինական երկու հակահարձակումներ՝ հարված Խարկովից, որը հետ մղեց ճակատը Օսկոլից այն կողմ, և Խերսոնի ուղղությամբ գործողությունները, որոնք ի հարկե չկարողացան ճեղքել ռուսների պաշտպանությունը, բայց, ի վերջո, հանգեցրին նրան, որ ռուսները լիակատար կարգով հետ քաշվեցին Դնեպրից այն կողմ՝ չափազանց ձգված ճակատի նյութատեխնիկական ապահովման և անվտանգության հետ կապված մտահոգությունների պատճառով: Այնուհետև ուժերը կրկին կենտրոնացան Դոնբասի կենտրոնական առանցքի ուղղությամբ, և 2023 թվականի գարնանը Բախմութի շուրջ ծավալվեց մեծ ճակատամարտ: Դրան հաջորդեց Ուկրաինայի անհաջող հարձակումը Ռուսաստանի պաշտպանական կառույցների ուղղությամբ Զապորոժյեում:

Վերոնշյալը հակիրճ ամփոփելու համար կարող ենք թվարկել պատերազմի առաջին երկու տարիների մարտական գործողությունների մի քանի փուլեր, որոնք տեղի ունեցան հաջորդաբար, և որոնցից յուրաքանչյուրը ռազմաճակատի տարբեր հատվածներում ունեցավ ծանրության իր կենտրոնը:

- Ռուսական հարձակումը «ցամաքային կամրջով», որն ավարտվեց Մարիուպոլի գրավմամբ (2022 թվականի ձմեռ-գարուն, հարավային ճակատ):
- Ռուսական հարձակումը Լուգանսկի ուղղությամբ, որն ավարտվեց Սևերոդոնեցկի և Լիսիչանսկի գրավմամբ (2022 թվականի ամառ, Դոնեցկ-Լուգանսկի ճակատ):
- Ուկրաինական հակահարձակումները Օսկոլի և Խերսոնի ուղղությամբ (2022 թվականի աշուն, Օսկոլի և Դնեպրի ճակատներ):
- Ռուսների հարձակումը Բախմութի ուղղությամբ (2023 թվականի ձմեռ-գարուն, կենտրոնական ճակատ):
- Ուկրաինական զորքերի հակահարձակումը «ցամաքային կամրջի» ուղղությամբ (2023 թվականի ամառ):

Այս ամենիով հանդերձ ամենաքիչ տեղաշարժը նկատվել էր ռազմաճակատի հարավ-արևելյան հատվածում՝ Դոնեցկի շրջանում: Դա ինչ-որ չափով անսովոր էր: Դոնեցկ քաղաքը Դոնբասի սիրտն է՝ հսկայական և խիտ բնակեցված արդյունաբերական քաղաք՝ գերաճած ագլոմերացիայի կենտրոնով, որտեղ ժամանակին ապրում էր մոտ 2 միլիոն մարդ: Եթե նույնիսկ Ռուսաստանին հաջողվի գրավել Զապորոժյեն, Դոնեցկը, անշուշտ, կմնա Մոսկվայի վերահսկողության տակ գտնվող ուկրաինական քաղաքներից ամենաբազմամարդը:

2014-ին, նախադոնբասյան պատերազմի սկսվելը, Դոնեցկը դարձել էր ռազմական գործողությունների մեծ մասի կենտրոն, իսկ քաղաքի հյուսիսային մատույցներում գտնվող օդանավակայանը՝ հատկապես կատաղի մարտերի թատերաբեմ: Այս առումով բավականին տարօրինակ էր, որ 2024 թվականի սկզբին ուկրաինական բանակը շարունակում էր զբաղեցնել այդ նույն դիրքերից շատերը, որոնք կառուցվել էին տասը տարի առաջ: Մինչ ինտենսիվ մարտերը մերթ հանդարտվում էին, մերթ բռնկվում էին ռազմաճակատի այլ հատվածներում, Դոնեցկը շարունակում էր պաշարման մեջ մնալ ուկրաինական հզոր պաշտպանության պատճառով, որը հենված էր Տորեցկից մինչև Ուգլեդար ձգվող ուժեղ ամրացված քաղաքային տրածքների վրա: Այս երկաթե օղակը ճեղքելու Ռուսաստանի առաջին փորձերը, ներառյալ 2023 թվականի ձմռանը Ուգլեդարի գրոհը, ձախողվեցին:

2024 թվականի հատկանշական իրադարձությունը Դոնեցկի ճակատում երկար տարիների ստատիկ մարտական գործողություններից հետո ռազմական գործողությունների վերսկսումն էր: Չափազանցություն չի լինի ասել, որ տարիներ շարունակ զսպելուց հետո 2024 թվականին ռուսական բանակը ճեղքեց այդ ճակատը, և Ուկրաինայի երկարամյա և ամուր պահվող քաղաքային հենակետերի ցանցը փլուզվեց:



2024թ. Ռուսաստանի առաջխաղացումը Դոնեցկի ուղղությամբ

Տարին սկսվեց Դոնեցկի Հյուսիսային մատույցները արգելափակող ուկրաինական ամրոցի վերածված Ավդեևկայի համար մղվող մարտերով: Այն ժամանակ ուկրաինական կողմից լսվող տիպիկ փաստարկն այն էր, որ ռուսական հարձակումը Ավդեևկայի ուղղությամբ սովորական PR է, այնուհետև՝ ռուսները քաղաքը գրավեցին չափազանց թանկ «մսային գրոհների» գնով, ինչը անխուսափելիորեն խաթարելու է Ռուսաստանի մարտական հզորությունը և թուլացնելու է հարձակումը շարունակելու նրա կարողությունը:

Անցած տարվա արդյունքներով մենք կարող ենք վստահաբար ասել, որ դա այդպես չէր: Ավդեևկայի անկումից հետո ռուսական ակտիվությունը երբեք լրջորեն չթուլացավ: Իրականում հենց ՈւԶՈւ-ն էր, որ ավելի ու ավելի էր ուժասպառ եղել: Ուկրաինական դիրքը Օչերետինոյի ելունում (որը նախկինում Ավդեևկայի շրջանում հակագրոհների նրանց ռազմահենադաշտն էր) գրավվեց մի քանի օրվա ընթացքում, և ամռան սկզբին առաջնագիծը հետ մղվեց դեպի Պոկրովսկ:

Ռուսասական առաջխաղացումը Պոկրովսկի ուղղությամբ շատերին ստիպեց հավատալ, որ այս քաղաքն ինքնին ռուսական ջանքերի թիրախում է, բայց դա օպերատիվ ծրագրի սխալ մեկնաբանում էր: Ռուսաստանը 2024 թվականին

Պոկրովսկը գրավելու կարիք չուներ՝ այն որպես լոգիստիկ հանգույց անօգուտ դարձնելու համար: Պարզապես շարժվելով դեպի E50 մայրուղու ուղղությամբ, ռուսական զորքերը կարողացան կտրել Պոկրովսկը Դոնեցկի հարավում գտնվող ուկրաինական դիրքերից, և Պոկրովսկը դարձեցին այնպիսի ճակատային քաղաք, որը գտնվում է ռուսական ԱԹՍ-ների և փողային հրետանու լիակատար վերահսկողության տակ:

Աշնանը ռուսական հարձակողական գործողությունները ուկրաինացիներին ծանր դրության մեջ դրեց՝ ստեղծելով դիրքերի անկայուն շղթա Սելիդովոյում, Կուրախովոյում, Ուգլեդարում և Կրասնոգորովկայում: Ռուսասական առաջխաղացումը Օչերետինոյից դեպի Պոկրովսկու հարավային մատույցների ուղղությամբ նման էր ահռելի գերանդու հարվածի, որը մեկուսացրեց ռազմաճակատի ամբողջ հարավ-արևելյան հատվածը և թույլ տվեց ռուսական զորքերին ճեղքել այն տարվա վերջին ամիսներին:



Ռուսական գործողությունները 2024 թվականին, Դոնեցկի առանցք

Այս պատերազմը «կոլապս» բառը վերածեց արժեզրկված բամբասանքի: Մեզ անընդհատ ասում են, որ այս կամ այն կողմը փլուզման եզրին է՝ պատժամիջոցները «կփլուզեն» Ռուսաստանի տնտեսությունը, 2023 թվականին Վագների ապստամբությունը ապացուցեց, որ ռուսական քաղաքական համակարգը «փլուզվում է», և, իհարկե, մենք լսում ենք, որ չափազանց մեծ կորուստների պատճառով այս կամ այն բանակը փլուզման եզրին է: Ո՞րտեղ է ճշմարտությունը:

Այնուամենայնիվ, ես կասեի, որ այն, ինչ մենք տեսանք 2024 թվականի հոկտեմբերից և դրանից հետո, այս հաճախակի կրկնվող և մերժված բառի իրական մարմնացումն է: Ուկրաինայի զինված ուժերը իսկական փլուզում ապրեցին հարավ-

արևելյան ճակատում: Հենակետերում տեղակայված ուժերը չափազանց կենտրոնացած և մեկուսացված էին վճռական պաշտպանություն վարելու համար, սեղմված հատվածներում ռուսների հասցրած կրակային խոցումը չափազանց խիտ էր որպեսզի հնարավոր լիներ դիմակայել, և ռազմական գործողությունների թատերաբեմում չկար մեքենայացված պահեստային ուժեր, որոնք կարող էին հակահարված հասցնել կամ թուլացնել ռուսների շարունակական ճնշումը:

Ուկրաինան ունի բավարար քանակությամբ ԱԹՍ-ներ և կրակային խոցման միջոցներ, որպեսզի սահմանափակի ռուսների առավելությունների լայնածավալ կիրառումը, ինչը նշանակում է, որ Ռուսաստանը դեռևս չի կարողանում մաններել մեծ խորություններում: Սա ռուսական հարձակմանը հաղորդեց «ստոպ-մեկնարկի» հատուկ որակ, որն իրականացվում էր մի բնակավայրից կամ ամրացման շրջանից մյուսը՝ ցատկերով: Ընդհանուր առմամբ, այն, որ Ռուսաստանը նախընտրում է կիրառել տարակենտրոնացված հարձակումներ փոքր ստորաբաժանումներով, սահմանափակում է նրանց օգտագործման հնարավորությունները: Սակայն պետք է ընդգծել, որ հոկտեմբերից ի վեր ռուսական դիրքերն այս ուղղությամբ երբեք լրջորեն չեն թուլացել, և ուկրաինական առանցքային դիրքերից շատերը բավականին արագ են գրավվել:

Լավ օրինակ է Ուգլեդար օրինակը: Սեպտեմբերի 24-ին ռուսները սկսեցին իրենց վերջնական հարձակումը քաղաքի ուղղությամբ: Սեպտեմբերի 29-ին Ուկրաինայի զինված ուժերի 72-րդ մեքենայացված բրիգադը սկսեց նահանջել: Հոկտեմբերի 1-ին Ուգլեդարն ամբողջությամբ Ռուսաստանի վերահսկողության տակ էր: Ուգլեդարը Ուկրաինայի առանցքային դիրքն էր, որը դրվեց բացարձակ անբարենպաստ վիճակում, որն էլ փլուզվեց մեկ շաբաթ անց: Իհարկե, կարելի է առարկել, որ Ուգլեդարը տարիներ շարունակ դիմակայել է: Այդ դեպքում ինչպես կարող ենք անվրդով տեսքով ասել, որ նա գրավվել է մեկ շաբաթվա ընթացքում, հենց դարնումն է խնդիրը: 2023 թվականի սկզբին Ուգլեդարը, Կուրախովոյի մերձակայքում տեղակայված հրետանու օգնությամբ, մի քանի ամիս կատաղի մարտերի ընթացքում հաջողությամբ հետ էր մղում ռուսական բազմաթիվ բրիգադներից կազմված խմբավորման հարձակումը: Սակայն, մինչև 2024 թվականի հոկտեմբեր ամիսը դիրքերը դարձան ամբողջովին անպիտան և գրոհից հետո անմիջապես լքվեցին:

Ուկրաինացիները հաջողության չհասան փորձելով պահպանել Կուրախովոն՝ նախկինում կարևոր թիկունքային շրջանը, որը ծառայում էր ինչպես լոգիստիկ հանգույց, այնպես էլ կրակային բազա՝ ճակատային գծում (նախկին) հենակետերին աջակցելու համար, ինչպիսիք էին Ուգլեդարը և Կրասնոգորովկան: Կուրախովոն, որն այժմ գտնվում է Ռուսաստանի լիակատար վերահսկողության տակ, իր հերթին կծառայեր որպես աջակցման բազա՝ Անդրեվկայի ուղղությամբ դեպի արևմուտք Ռուսաստանի շարունակական առաջխաղացման խոչընդոտմանը:

Ընդհանուր առմամբ գնահատելով ռազմաճակատի վիճակը՝ Ուկրաինայի զինված ուժերը ներկայումս երկու լուրջ ելուստ են պահում ճակատային գծի հարավային ծայրմասում՝ մեկը Վելիկայա Նովոսելկայի շրջանում, իսկ մյուսը՝ Անդրեևկայի շրջանում: Առաջինը, ամենայն հավանականությամբ, կընկնի Վելիկայա Նովոսելկան, քանի որ քաղաքը ամբողջովին մեկուսացված է թևերից հարձակվող ռուսների կողմից: Ստեղծված իրավիճակը նման չէ Բախմուտի իրավիճակին,

որտեղ ճանապարհները կոչվում էին «կտրված», քանի որ դրանք գտնվում էին ռուսական հրետակոծության տակ: Տվյալ դեպքում դեպի Վելիկի Նովոսելկա տանող բոլոր մայրուղիները ֆիզիկապես կտրված են ռուսական անցակետերով, ինչը դիրքերի կորուստը դարձնում է ընդամենը ռուսների հարձակմանը սպասելու խնդիր: Ավելին, դեպի հյուսիս՝ Գրոդովկայի և Տորեցկի միջև, գոյություն ունեն առավել զառիկող և պակաս ամրացված ելուստներ: Քանի որ Տորեցկն այժմ գտնվում է գրավման վերջին փուլում (ուկրաինական զորքերը քաղաքի ծայրամասում պահում են միայն փոքր բնակելի թաղամաս), առաջիկա ամիսներին այստեղ նույնպես ռազմաճակատը հավասարեցվելու է:



Սա թույլ կտա ռուսներին քիչ թե շատ լիովին վերահսկել Կոնստանտինովկայի և Պոկրովսկու մատույցները, որոնք շատ առումներով ուկրաինացիների կողմից վերահսկվող նախավերջին դիրքերն են Դոնբասում: Պոկրովսկն արդեն շրջանցվել է մի քանի մղոն դեպի արևմուտք, և, ըստ քարտեզի, նախանշվում է քաղաքային տարածքները գրոհելու ռուսական տիպիկ մարտավարական մեթոդաբանության կիրառումը, երբ ծայրամասերով քաղաքը մեկուսացվում է հիմնական մայրուղի-ներից, որից հետո մի քանի ուղղություններով հաջորդում է քաղաքի գրոհը:

Առաջիկա ամիսներին Ռուսաստանը կշարունակի իր հարձակումն այս ճակատում, ինչը կարող է դիտվել միայն որպես Ուկրաինայի զինված ուժերի կողմից կրիտիկական կարևոր ճակատի փլուզում: Ռուսական բանակը առաջ կշարժվի դեպի Դոնեցկի շրջանի արևմտյան սահմանը և դուրս կմղի ուկրաինացիներին մնացած հենակետերից՝ Վելիկայա Նովոսելկայից և Անդրեևկայից, միաժամանակ շարժվելով

դեպի Պոկրովսկի խորքը: Ավդեևկայի անկումից ի վեր ոչ մի անգամ ուկրաինացիները ցույց չեն տվել, որ կարող են լրջորեն զսպել Ռուսաստանի առաջխաղացումը նշված 75 մղոնանոց ճակատում, և ուկրաինական ռազմական ռեսուրսների շարունակական փոշիացումը ապացուցում է, որ 2025 թվականին շատ բան չի փոխվելու:

Հենման կետ. արագ կրճատվող Կուրսկի ելուստ

2024 թվականի աշնան և ձմռան առաջին ամիսների ընթացքում, երբ ուկրաինական զորքերը դուրս էին մղվում Դոնբասի հարավում ամրացված դիրքերի իրենց խիտ ցանցից, նրանց զինակիցները շարունակում էին համառորեն իրենց դիրքերը պահել Ռուսաստանի Կուրսկի մարզում: Ներկա պահին Կուրսկի աղեղում ՈՒկրաինայի հարձակման հիմնական ուրվագիծը հայտնի է որպես պատերազմի հոգեբանական հետագիծը փոխելու և Ռուսաստանի հեղինակությանը հարված հասցնելու գամբիտ: Ուկրաինական հարձակումը մեծ թափ ստացավ նախնական ռազմավարական անակնկալի հասնելուց հետո, բայց արագ մարեց, երբ նրանց շարասյուները բախվեցին Սուջիից դուրս տանող մայրուղիների դիրքերի արդյունավետ արգելափակմանը: Կորենովոյի և Բոլշոյ Սոլդատսկոյեի ճանապարհներիներով մարտանցման փորձերը ձախողվեցին, և ուկրաինական խմբավորումը մնաց Սուջիի շրջանի համեստ ելուստում:

Ամբողջ աշնանը ռուսական հակագրոհները կենտրոնացած էին ուկրաինական ելուստի հիմքը կտրելու վրա՝ ուկրաինացիներին Սնագոստից և Կորենովոյից դուրս մղելուն: Այստեղ առաջընթացն աստիճանաբար, բայց նշանակալի էր, և հունվարի սկզբին ուկրաինական ելուստի «բկանցքը» կրճատվեց մինչև ինը մղոն լայնության, մինչդեռ ամռանը այն կազմում էր քսան մղոն: Ընդհանուր առմամբ, օգոստոսի համեմատությամբ ուկրաինացիները կորցրեցին գրավյալ տարածքների մոտ 50% - ը:

Ելուստի թևերում ռուսական ճնշումն ամրապնդեց բազմաթիվ բնութագրեր, որոնք այդ դիրքն անօգուտ և վտանգավոր էին դարձնում ՈՒԶՈՒ-ի համար: Ուկրաինական զորքերի համար կա սահմանափակ ճանապարհային հաղորդակցություն, խնդիր, որը սրվել էր Սնագոստից նահանջով, ինչը նրանց զրկել է Կորենովոյից Սումի տանող մայրուղու հասանելիությունից: Բացի մի քանի շրջանցիկ ճանապարհներից, Ուկրաինական զորքերն ունեն միայն մեկ մայրուղի՝ R200 մայրուղին, շրջապատման մեջ գտնվողներին մատակարարումներով ապահովելու համար, ինչը թույլ է տալիս ռուսական զորքերին հետևել նրանց հաղորդակցություններին և արդյունավետ արգելափակող հարվածներ հասցնել: Առաջացած «գրպանների» նեղացումը զգալիորեն հեշտացնում է ռուսական ԱԹՍ-ների խոցման գործունեությունը, իսկ փողային հրետանու և հրթիռային տեխնիկայի համար ստեղծում է ավելի խիտ և հագեցած կրակային հարվածի հնարավորությունները:

Թեև այս դիքորոշումը չափազանց անարդյունավետ էր Ուկրաինայի համար, այն անշեղորեն ետին պլան մղվեց և որևէ փոխգործողություն չունեցավ այլ, ավելի կարևոր ռազմական թատերաբեմերի հետ: Ուկրաինական ստորաբաժանումների նույն խմբավորումը մնում է այստեղ, որոնք մարտընչում են անընդհատ նեղացող տարածքում: Ավելի տարակուսելի է այն փաստը, որ ուկրաինական խմբավորումը բաղկացած է հիմնականում առաջավոր ստորաբաժանումներից՝ մեքենայացված և

օդադեսանտային բրիգադներից, որոնք վերջին երեք ամիսներին կարող էին զգալի ներդրում ունենալ Դոնբասի ռեզերվի դերում:



Կուրսկի ելուստ: Ընդհանուր իրավիճակը 2025 թվականի հունվարին

Հունվարի 5-ին ուկրաինական զինված ուժերն անակնկալ մատուցեցին հարձակման անցնելով Կուրսկի ելուստում: Ինտերնետը, իհարկե, շտապեց եզրակացնել, որ ՈւԶՈւ-ն պատրաստվում է վերադառնալ ընդհանուր հարձակողական օպերացիային, բայց իրականությունն այնքան էլ տպավորիչ չէր: Բոլշոյ Սալդատսկոյի ուղղությամբ գումարտակի ուժերով գրոհը, մի քանի կիլոմետր անցելով, շնչահեղձ եղավ: Ռուսական ԱԹՍ-ները ճնշելու Ուկրաինայի փորձերը տապալվեցին՝ օպտիկամանրաթելային համակարգերի տարածման պատճառով, և ուկրաինական հարձակումը ձախողվեց մեկ օրվա ընթացքում: Ուկրաինական հարձակման մարտավարական առանձնահատկությունները հետաքրքիր են, և դրա նպատակի վերաբերյալ շահարկումները շարունակվում են: Գուցե այն նախատեսված էր ռոտացիայի իրականացումն պաշտպանելու կամ զորքերը դուրս բերելու, ելուստի հյուսիսային եզրին մարտավարական դիրքերը բարելավելու կամ թաքնված քարոզչական նպատակների համար: Այնուամենայնիվ, այս առանձնահատկությունները էական չեն: Ելուստի վերջնամասից հարձակումը (այսինքն՝ ներթափանցումը Ռուսաստան խորացնելու փորձը) ոչ մի կերպ չէր կարող ազդել Կուրսկում Ուկրաինայի խնդիրների լուծման հարցում: Իսկ խնդիրներից մեկն այն է, որ մարտավարական մակարդակում ելուստը խիստ սեղմվել է թևերում և շարունակում է նեղանալ: Երկրորդ խնդիրն այն է, որ ռազմավարական մակարդակում դիտավորյալ վատնվում է ռազմաճակատի արժեքավոր մեքենայացված միջոցները, որոնք չեն կարող ազդել ռազմական գործողությունների կարևորագույն թատերաբեմերի վրա: Այլ կերպ ասած, «Կուրսկ» - ը երկրորդական և կողմնակի իրադարձություն է, որը սխալ է ընթացել, նույնիսկ իր օպերատիվ տրամաբանության շրջանակներում:

Մի բան, որ անվերջ հետաքրքրություն է ներկայացնում, Կուրսկում Հյուսիսային Կորեայի զորքերի մարտնչելու մասին շարունակվող լուրերն են: Արևմտյան հետախուզական ծառայությունները անդրդվելի են Կուրսկում հյուսիսկորեացիների ներկայության հարցում: Որոշ մարդիկ հակված են բնազդաբար չհավատալ այն ամենին, ինչ ասում են արևմտյան պաշտոնյաները, չնայած կարծում եմ, որ որոշ թերահավատություն արդարացված է: Ես ինքնաբերաբար չեմ ենթադրում, որ նրանք ստում են: Վերջին զեկույցներից մեկը ներկայացնում է պատմության թվացյալ հավաստի տարբերակը, որ գաղափարն իրականում ծագել է Փհենյանում, այլ ոչ թե Մոսկվայում, և որ կորեացի զինծառայողների համեստ թիվը (հնարավոր է՝ 10,000 մարդ) միավորված են ռուսական ստորաբաժանումների հետ: Այստեղ ենթադրվում է, որ կորեացիները այս գաղափարը մշակել են որպես մարտական փորձ ձեռք բերելու միջոց, իսկ ռուսներն իրենց հերթին ստացել են օժանդակ ուժեր, թեև կասկածելի մարտական արդյունավետությամբ:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ դա այնքան էլ կարևոր չէ, որքան թվում է: Շատ է խոսվել այն մասին, որ Հյուսիսային Կորեայի ներկայությունն ապացուցում է Ռուսաստանի մի տեսակ հուսահատությունը, բայց առաջին հայացքից դա բավականին հիմար ենթադրություն է: Ռուսական բանակի ավելի քան 1,5 միլիոն ակտիվ զինծառայողների դեպքում Կուրսկում 10,000 կորեացի զինծառայողների առկայությունն աննշան լրացում է: Ավելի վաղ հաղորդվել էր, որ հյուսիսկորեական զորախումբը ներկայացվել է որպես պատերազմի գլխավոր մեկնարկային կետ: Մասնավորապես, «Հյուսիսային Կորեայի զորքերը Եվրոպայում» ձևակերպումն օգտագործվում էր սառը պատերազմի պատկերներ ստեղծելու համար, երբ Կոմունիստական դեսպոտիզմը գրավում էր ազատ աշխարհը:

Բանն այն ենթադրությունում է, որ հյուսիսկորեական զորքերը գտնվում են Ռուսաստանի տարածքի Կուրսկի շրջանում: Դա, իհարկե, կապված է Մոսկվայի և Փհենյանի միջև վերջերս կնքված փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի հետ: Հարձակման անցնելով Կուրսկի աղեղում (ընդլայնելով ճակատը դեպի Ռուսաստանի նախապատերազմական տարածք), Ուկրաինան Ռուսաստանին առջև դրեց պաշտպանական մարտական խնդիր, որը հնարավորություն ընձեռնեց Հյուսիսային Կորեայից ռազմական օգնություն ստանալու: Որքան էլ ինչ-որ մեկը ցանկանում է կորեական զորախումբը կապել ռուսական ահռելի «ագրեսիվ պատերազմի» հետ, Կուրսկի աղեղի ուժերը օբյեկտիվորեն մասնակցում են Ռուսաստանի տարածքի պաշտպանությանը, և դա թույլ է տալիս Ռուսաստանին մարտական գործողություններ իրականացնելու համար օգտագործել օժանդակ, ներառյալ զորակոչիկների ու դաշնակից զորքերիր ուժերը:

Այսպիսով, ի վերջո, Կուրսկում հյուսիսկորեացիների ներկայությունը հետաքրքիր է, բայց, ի վերջո, գուցե շատ կարևոր չէ: Այս զորքերը Ուկրաինայում չեն (նույնիսկ ուկրաինական տարածքային միավորի առավելագույն սահմանմամբ), նրանք չեն կրում հիմնական մարտական բեռնվածությունը և միանշանակ չեն հանդիսանում այն խնդիրը, որի հետ Ուկրաինայի զինված ուժերը բախվում են Կուրսկում: Այլ կերպ ասած, Ուկրաինայի համար « մեծ խնդիրը» ոչ թե ինչ-որ ամորֆ կորեական հորդայի ներկայությունն է, որն իրեն նվիրել է Եվրոպայում Չուչխեի փառավոր ուսմունքի տարածմանը, այլ այն, որ իրենց թանկարժեք մեքենայացված բրիգադների մեծ խմբավորումները, սեղմված տարածքում, մնացել են առանց իրական գործի, Դոնբասից հեռու, որտեղ դրանք խիստ անհրաժեշտ են:

Քամել մինչև լիովին չորանալը. ՈՒկրաինայի զինված ուժերի կուտակելը

Կարծում եմ, իհարկե, բոլորը լավ գիտակցում են, որ ՈՒկրաինան բախվում է կադրային լուրջ խնդիրների՝ համեմատած Ռուսաստանի հետ, հատկապես առկա ժամկետային զինծառայողների ընդհանուր թվաքանակի առումով: Ռուսաստանում մոտավորապես 35 միլիոն տարիքն առած տղամարդիկ կարող են մասնակցել ռազմական գործողություններին, մինչդեռ նախապատերազմյան Ուկրաինայում մոբիլիզացնել կարող էին 9 միլիոն տղամարդու:

Ուկրաինայում մոբիլիզացիայի ծրագրի իրականացմանը խոչընդոտում են ինչ-պես զորակոչից խուսափելու տարածված դեպքերը (պատերազմի շարունակմանը զուգընթաց ծառայելու պատրաստակամության նվազումով), այնպես էլ 18-25 տարեկան երիտասարդ տղամարդկանց բանակ զորակոչելու համառ դժկամությունը: Կառուցվածքային առումով բնակչությունը Ուկրաինայում աչքի է ընկնում խորը անհավասարակշռության ծանրաբեռնվածությամբ: Այսպես, 30-ն անց ուկրաինացի տղամարդիկ մոտ 60%-ով քանակապես ավելի են, քան 20-ն անց տղամարդիկ: Հաշվի առնելով երիտասարդների հարաբերական պակասը, հատկապես 20 տարեկանների շրջանում, Ուկրաինայի կառավարությունը արդարացիորեն դիտում է 18-25 տարեկաններին որպես բարձր դասի ժողովրդագրական խումբ, որը չի կարելի կորցնել մարտում: Հաշվի առնելով զորակոչից համատարած խուսափման դեպքերը և երիտասարդներին մոբիլիզացնելուց հրաժարվելը, ինչպես նաև Ուկրաինայի կառավարությանը բնորոշ կոռուպցիան և անարդյունավետությունը, զարմանալի չէ, որ զորահավաքը խափանվում է:

Ռուսաստանը, ընդհակառակը, ունի և՛ նորակոչիկների ավելի մեծ պոտենցիալ, և՛ ավելի արդյունավետ զորահավաքի մեխանիզմ: Ի տարբերություն Ուկրաինայի պարտադիր զորակոչի համակարգի, Ռուսաստանը կամավորներ ներգրավելու համար ապավինում է բանակին միանալու առատաձեռն բոնուսներին: Ռուսական խրախուսման համակարգը մինչ այժմ ապահովում է զորակոչիկների մշտական հոսք, որն ավելի քան բավարար է Ռուսաստանի կորուստները փոխհատուցելու համար: Չխորանալով ռուսական կորուստների վերաբերյալ տարբեր սպեկուլյատիվ գնահատականների մեջ՝ արևմտյան ռազմական ղեկավարության մեծամասնությունն ընդունում է, որ Ռուսաստանն այժմ զգալիորեն ավելի շատ անձնակազմ ունի, քան պատերազմի սկզբում:

Այս ամենը վկայում է, որ Ուկրաինան բախվում է կենդանի ուժի լուրջ կառուց-վածքային թերությանը, որը սրվում է զորահավաքի մասին օրենքի առանձնա-հատկություններով, բայց որոշ չափով մեղմվում է զորքերի համեմատաբար ցածր խտության և այս պատերազմում հարվածային համակարգերի ճնշող հզորության առկայության պատճառով:

Սակայն, այն փաստարկը, որը ես ուզում եմ այստեղ բերել, այն է, որ Ուկրաինայի համակարգային խնդիրները Ռուսաստանի հետ կապված սրվել են մի քանի իրադարձությունների պատճառով, որոնք հատկապես ակնհայտ են դարձել 2024 թվականին: Այլ կերպ ասած, 2024 թվականը կարող է և պետք է նշվի որպես

տարի, երբ Ուկրաինայում կենդանի ուժի պակասը նկատելիորեն և, հնարավոր է, անուղղելիորեն սրվել է Կիևում ընդունված կոնկրետ որոշումների և տեղերում կոնկրետ իրադարձությունների պատճառով:

Որոնք են այդ իրադարձությունները.

1.«15-րդ սերիայի» բրիգադներ ստեղծելու միջոցով Ուկրաինայի զինված ուժերի կառուցվածքի ընդլայնման մասին որոշումը:

2. Կուրսկի վրա հարձակում սկսելով ռազմաճակատի միտումնավոր ընդլայնման միջոցով կենդանի ուժի լրացուցիչ կարիք ստեղծելու որոշումը:

3. Աշնանանային զորահավաքի նոր ծրագրի կասեցումը:

4. Զինված ուժերում դասալքության հետ կապված խնդիրների սրացումը:

Դիտարկենք դրանք ըստ հերթականության:

Նոր զինծառայողներ ընդունող բանակը պետք է ընտրի երկու հնարավոր տարբերակներից մեկը: Նորակոչիկներով կարող են համալրվել գոյություն ունեցող ճակատային գծի ստորաբաժանումները կամ ընդլայնելով զինված ուժերի կառուցվածքը՝ ստեղծել նոր ստորաբաժանումներ: Սա բավականին ակնհայտ է թվում, և իդեալում զորահավաքը պետք է գերազանցի կորուստները և թույլ տա իրագործել և այս և այն: Սակայն, որտեղ բանակները բախվում են կադրային խիստ սահմանափակումների, այսինքն՝ որտեղ կորուստները հավասար են կամ գերազանցում են համալրման քանակը, զինված ուժերի կառուցվածքի ընդլայնման վերաբերյալ որոշումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ: Իհարկե, կարծրատիպային օրինակ կարող է ծառայել Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին վերմախտի ստեղծած նոր Waffen SS առաջադեմ ստորաբաժանումները, որոնք օգտվելու արտոնյալ հնարավորություն ստացան նորակոչիկների և հանդերձանքի առումով, մինչդեռ կանոնավոր բանակի ստորաբաժանումները տառապում էին համալրման պակասից, չէին կարողանում ծածկել կորուստները:

Ուկրաինան, իր զինված ուժերի խեղաթյուրված կառուցվածքով, խառնաշփոթ ստեղծեց, երբ շփման գծի անձնակազմի թվաքանակի կրճատման հաշվին փորձեց ընդլայնել զինված ուժերի կառուցվածքը: 2023 թվականի վերջին Ուկրաինայի զինված ուժերը հայտարարեցին բրիգադների բոլորովին նոր խմբավորման՝ այսպես կոչված «15-րդ սերիա» ստեղծման մտադրության մասին՝ հաշվի առնելով դրանց նշանակումը որպես 150-րդ, 151-րդ, 152-րդ, 153-րդ և 154-րդ մեքենայացված բրիգադներ: 2024 թվականին դրան հաջորդեց 155-րդ մեքենայացված բրիգադը, որը պետք է վերապատրաստվեր և վերազինվեր Ֆրանսիայում:

Մեքենայացված բրիգադների նոր խմբավորման ձևավորումը կարևոր է նրանով, թե ինչպես է Ուկրաինան ներկայացնում իր պատերազմը: Քանի որ Ուկրաինան դեռևս ձգտում է (գոնե թղթի վրա) հետ գրավել Ռուսաստանի կողմից վերահսկվող իր տարածքները, ապա միշտ պետք է գոյություն ունենա ապագա հարձակման պատրանքային հնարավորությունը, և որպեսզի այդ պատրանքային հնարավորությունը իրականանա, նա պետք է ներկայանա որպես ապագա հարձակողական օպերացիաներին ակտիվորեն պատրաստվող: Ուկրաինայի կողմից սեփական ռազմավարական թշնամանքի ցուցադրումը, այսինքն այն գաղափարը, որ նա պահում է ճակատը՝ պատրաստվելով երկրորդ հարձակմանը, ըստ էության նրան կապում է իր զինված ուժերի կառուցվածքի ընդլայնման ծրագրի հետ:

Ուկաիանայի զինված ուժերի պրոբլեմն այն է, որ ռազմաճակատում գոյություն ունեցող հսկայական ճնշումը գործնականում թույլ չի տալիս նրանց պատշաճ

կերպով տնօրինել ռեսուրսները այնպես, ինչպես կցանկանային: Շատ օգտակար կլիներ կես տասնյակ նոր մեքենայացված բրիգադներ պատշաճ կերպով վերապատրաստել, վերազինել և պահեստազորում պահել, բայց նրանք չեն կարող դա անել, քանի որ ռազմաճակատում անձնակազմի պակաս կա: Փոխարենը, այս բրիգադները դառնում են «թղթե կազմավորումներ», որոնք պահպանում են միայն իրենց բյուրոկրատական գոյությունը, մինչդեռ նրանց հիմնական ուժերն ու միջոցները մաս առ մաս ուղարկվում են ռազմաճակատ՝ բաժանվելով ըստ գումարտակների կամ վաշտերի: Այս պահի դրությամբ «15-րդ սերիայի» բրիգադներից ոչ մեկը, իր լրիվ հաստիքաքազմով, որպես միավոր չի մասնակցել մարտական գործողություններին:

Լավագույն օրինակ է ծառայում Ֆրանսիայում պատրաստված 155-րդ բրիգադի օրինակը: Ի սկզբանե բրիգադը ստեղծվել էր որպես 5800 հոգուց բաղկացած ուժեղացված միավոր, որը հագեցած էր եվրոպական բարձրակարգ սարքավորումներով: Սակայն, բրիգադն ի սկզբանե անձնակազմի պակաս ուներ: Ուկրաինական աղբյուրները հայտնում էին, որ մոտ 1700 մարդ, որոնցից շատերը, ովքեր բռնի կերպով էին փողոցներից զորակոչվել, վերապատրաստման և կազմավորման ընթացքում ինքնակամ թողնում էին (դասալքություն) զորամասը: Բրիգադի ղեկավարության տապալումը, որի հրամանատարը հրաժարական տվեց, էլ ավելի բարդացրեց իրավիճակը, և Պոկրովսկու մերձակայքում գտնվող միավորման առաջին մարտական գործողությունները անհաջող անցան: Այժմ բրիգադը մասնատվում է, եթե պաշտոնապես չի լուծարվել, իսկ անձնակազմն ու տեխնիկան հարևան ստորաբաժանումներն ուժեղացնելու համար՝ կրճատվում և բաժանվում է:

Նոր մեքենայացված բրիգադներին անձնակազմ հատկացնելու որոշումը (չնայած, հաշվի առնելով զրահատեխնիկայի պաշարները, կասկածելի է, որ այդ անվանումները ինչ-որ բան են նշանակում) պարտադիր չէ, որ փոխի ուժերի ընդհանուր հավասարակշռությունը Ուկրաինայում, բայց դա, անկասկած, անձնակազմի օգտագործման անարդյունավետ միջոց է: Կրկին վերադառնալով 155-րդ բրիգադին, նշենք, որ ուկրաինացի վերլուծաբանների կարծիքով խնդիրներից մեկն այն էր, որ բրիգադի մեծ մասը (մոտ 75%-ը) կազմավորվել էր, Ֆրանսիա ժամանելուց երկու ամիս առաջ, բռնի զորակոչված անձնակազմից՝ առանց վետերանների և փորձառու սերժանտների պատշաճ կազմի: Այս փաստը, անշուշտ, որոշիչ է եղել բրիգադի զանգվածային դասալքության և ցածր մարտունակության հարցում:

Հաշվի առնելով Ուկրաինայի առջև ծառացած դժվարությունները, գործողությունների լավագույն տարբերակը, անկասկած, կլինի նոր անձնակազմի և սարքավորումների տրամադրումը որպես առաջնագծում սպառված վետերանների բրիգադները փոխարինելու, ինչպես նաև ռազմաճակատում գործող սպաների թիվը համալրելու համար: Կիևը, սակայն, գնահատում է հեղինակությունը, որը գալիս է զինված ուժերի ընդլայնումից և «փայլփլող նոր խաղալիքների» գործոնից, որոնք հագեցած են հազվագյուտ և արժեքավոր սարքավորումներով, ինչպիսիք են Leopard տանկերը: Այս նոր բրիգադները, թեև համարվում են առաջադեմ միավորումներ, ակնհայտորեն ավելի քիչ մարտական արդյունավետություն ունեն, քան գոյություն ունեցող կազմավորումները՝ հաշվի առնելով նրանց փորձի բացակայությունը, վետերան սպաների պակասը և ստորաբաժանումների ցածր համախմբվածությունը:

Սակայն իրականությունն այնպիսին է, որ գոյություն ունեցող բրիգադների համալրումը գրեթե չի համապատասխանում կորուստների մակարդակին: Առաջնագծի ստորաբաժանումներն արդեն մի քանի ամիս բողոքում են հետևակի ավելի ու

ավելի սուր պակասից, իսկ Պոկրովսկու ուղղությամբ որոշ բրիգադներ հայտնում են, որ դրանց թիվը կազմում է հաստիքի 40%-ից պակաս:

Մի խոսքով, Ուկրաինայի որոշումը՝ սկսել զինված ուժերի կուտակումը կենդանի ուժի զգալի պակասի պայմաններում, սրեց խնդիրը՝ ինչպես համալրման համար վետերանների ստորաբաժանումների պակասի, այնպես էլ անարդյունավետ մարտական կազմավորումներում նոր զորակոչված անձնակազմի կենտրոնացման պատճառով, որոնք չունեն վետերանների միջուկ, փորձառու սպաներ և կենսական սարքավորումներ: Ուկրաինայի զինված ուժերը պետք է համալրվեն, քանի որ նրանք պետք է սովորեն, թե ինչ է տեղի ունենում, և ինչի է տեղի ունենում: Նրանք ուշացումով փորձեցին հարթահարել դա՝ գծային բրիգադներին աջակցելու համար առանձնացնելով նոր կազմավորումներ, բայց դա հեռու է իդեալական լինելուց: Այս ամենը հանգեցնում է անկանոն մարտական կարգավորման՝ ստորաբաժանումների ավելի քիչ համախմբվածությամբ և մասնատված պաշտպանությամբ:

Ցավոք սրտի, դա տեղի է ունենում հենց այն պահին, երբ Ուկրաինան ինքը լրացուցիչ բեռ է ստեղծում իր ռեսուրսների համար, մասնավորապես՝ Կուրսկի շրջան ներխուժման արդյունքում: Ներկայումս Կուրսկի ուղղությամբ տեղակայված են առնվազն յոթ մեքենայացված բրիգադներ, ծովային հետևակի երկու բրիգադներ և երեք օդադեսանտային բրիգադներ: Չխորանալով Ուկրաինայի գործողության մանրամասների մեջ, կարևոր է հիշել, որ Ուկրաինան, բախվելով իր զինված ուժերի ձևավորման վրա արտակարգ ճնշումների, ինքնակամ որոշեց ընդլայնել ճակատը՝ այն վերածելով ռազմական գործողությունների երկրորդական թատերաբեմի, շեղելով սակավ ռեսուրսները և նվազեցնելով ուժերը խնայելու սեփական կարողությունը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Ուկրաինան գիտակցված որոշում է կայացրել ընդլայնել ռազմաճակատն ու զինված ուժերը, որոնք վճռական վնաս են հասցրել անձնակազմի խնայմանն ուղղված նրա ջանքերին: Դա տեղի է ունենում հենց այն պատճառով, որ 2024 թվականին զորահավաքն արագացնելու ջանքերը դուրս են եկել ռելսերից:

Ուկրաինայի զորահավաքային ծրագիրը տառապում էր մի շարք թերություններով, ներառյալ բացերն ու սխալները նրա տվյալների բազաներում, ինչպես նաև համատարած կոռուպցիան և բյուրոկրատիայի անարդյունավետությունը: 2024 թվականին ընդունված օրենքներն ուղղված էին այդ խնդիրներից շատերի վերացմանը, այդ թվում՝ հավելվածի ներդրմամբ, որը հնարավորություն կտար զորակոչի ենթակա տղամարդկանց գրանցվել և ստուգել իրենց կարգավիճակը՝ առանց զորակոչային կետեր այցելելու անհրաժեշտության: Թվում էր, թե իրավիճակը հասել է գագաթնակետին, երբ 2023 թվականին Զելենսկին աշխատանքից հեռացրեց զորակոչի մի քանի պատասխանատուներին, և հրատապության իրական զգացում առաջացավ: Որոշ նախնական խոստումներից հետո պարզ դառձավ, որ այս ուժեղացված զորահավաքային արշավը խափանվել է աշնան վերջին և ձմռան սկզբին:

Սկզբում Ուկրաինայի հարցում լավատեսության նշաններ կային: Զորահավաքի մասին նոր օրենքի ընդունումից հետո առաջին ամսվա ընթացքում ալիք բարձրացավ, և 30 000 նոր զինծառայող զորակոչվեց բանակ: Այնուամենայնիվ, ամռան վերջին զորակոչի այս սկզբնական աճը ի չիք դարձավ և զորահավաքը կրկին սկսեց հետ

մնալ զինված ուժերի կորուստներից: Ուկրաինայի գլխավոր շտաբի հոկտեմբերյան ճեպազրույցը հաստատեց, որ զորահավաքի մասին նոր օրենքի հետևանքով առաջացած կարճատև աճից հետո զորակոչիկների թիվն արդեն կրճատվել է 40%-ով՝: Մոտավորապես նույն ժամանակ Օդեսայի (մեծությամբ Ուկրաինայի երրորդ քաղաքն է) պաշտոնյաները խոստովանեցին, որ կատարում են իրենց զորահավաքային քվոտայի միայն 20%-ը:

Խնդիրները շատ են: Զորահավաքային նոր օրենքը որոշ նախնական բարելավումներ բերեց, բայց ի վերջո չկարողացավ լուծել զորակոչից խուսափելու խնդիրները, բյուրոկրատական սխալ հաշվարկները մնում են սովորական, և գործատուները, ովքեր հուսահատված են աշխատողներին պահել, դիմումներ են ներկայացրել աշխատանքի հետ կապված տարկետումների համար: Չկարողանալով պահպանել զորակոչի նախնական մակարդակը, Ուկրաինան կանգնած է կադրային ճգնաժամի առաջ:

Բացի այդ, Ուկրաինայի շարունակական ձախողումը, երբ ժամանակին չի ապահովվում ռոտացիան կամ զորացրումը, նշանակում է, որ զորակոչված անձնակազմը առաջնագծում կանգնած է անժամկետ ծառայության հեռանկարի առջև: Ակնհայտ է, որ դա վատ է անդրադառնում զինվորների բարոյահոգեբանական վիճակի վրա, քանի որ նրանք քննարկում են երկար տարիներ շարունակական ծառայության հնարավորությունը, ինչը, իր հերթին, հանգեցնում է դասալքության, որը գնալով ավելի մեծ խնդիր է դառնում զինված ուժերի համար: Ըստ որոշ տեղեկությունների, այս պահի դրությամբ ուկրաինացի դասալիք զինծառայողների թիվը կազմում է 100,000, որոնցից շատերի հիմքը, անկասկած, ֆիզիկական և հոգեբանական լարվածությունն է:

Ներկայումս գործում է վտանգավոր հետադարձ կապ, որի դեպքում ռոտացիայի բացակայությունը և համալրման պակասը հանգեցնում է անձնակազմի հեռացման արագացմանը: Ուկրաինայի զինված ուժերը ի վիճակի չեն կանոնավոր կերպով իրականացնել մարտից դուրս բերված ստորաբաժանումների ռոտացիան, իսկ համալրման անբավարար հոսքը հանգեցնում է հետևակի հյուծմանը: Չկարողանալով ապահովել ռոտացիայի բնականոն աշխատանքը կամ գծային բրիգադների համալրումը, ուկրաինական հրամանատարությունը առաջնագծի դիրքեր է ուղղարկում օժանդակ ստորաբաժանումների զինծառայողներին՝ ականանետորդներին, վարորդներին և ԱԹՍ օպերատորներին: Սա էլ ավելի է մեծացնում կորուստները, քանի որ բրիգադները մարտնչում են նոսրացած կրակային աջակցության և թիկունքային ապահովման պայմաններում: Ուստի ուկրաինացի տղամարդիկ այլևս չեն ցանկանում զորակոչվել բանակ, քանի որ այժմ երաշխիք չկա, որ դառնալով, օրինակ, ԱԹՍ օպերատոր, նրանք ի վերջո չեն ուղարկվի առաջնագծի խրամատներ:

Ի՞նչ է դա մեզ տալիս: Ուկրաինան դեռևս ունի շատ մեծ ուժեր, որոնք կազմում են հարյուրից ավելի բրիգադներ և հարյուր հազարավոր զինված մարդկ: Սակայն, ռուսական բանակի համեմատ նրանք անբարենպաստ փոքրամասնության են կազմում և անկման ակնհայտ միտում են ցուցաբերում: Չնայած 2024 թվականին զորահավաքային մեխանիզմն ակտիվացնելու լայնորեն գովազդված փորձին, նորակոչիկների հավաքագրումը ակնհայտորեն չափազանց փոքր է կորուստները փոխհատուցելու համար, և ծանր ստորաբաժանումների հզորությունը ճակատի կարևորագույն հատվածներում, հատկապես հետևակային ստորաբաժանումներում, նվազել է, որոշ դեպքերում հասելով կրիտիկական մակարդակի:

2024 թվականի Ուկրաինական զորահավաքային ծրագրի ձախողումը համընկավ է մի քանի ռազմավարական որոշումների հետ, որոնք խորացրին մարդկային ռեսուրսների հետ կապված խնդիրները, մասնավորապես՝ զինված ուժերի ընդլայնման ծրագրին անցնելու որոշումը, չնայած, այն հանգամանքին, որ զինված ուժերը կամավոր երկարաձգեցին իրենց պարտավորությունները՝ բացելով նոր պահեստային ճակատ Կուրսկում: Այլ կերպ ասած, Ուկրաինայի զորահավաքը չի համապատասխանում նրա ուժային պահանջներին, և ԶՈՒ կատարած ընտրությունը խաթարել է նրանց մարդկային ուժերը խնայելու ունակությունը: Ստորաբաժանումները կրճատվում են, համալրումը գալիս է աննշան հոսքով, ռոտացիաները ուշանում են կամ ընդհանրապես չեն անցկացվում, ստորաբաժանումները մաս-մաս բաժանվում են, իսկ զայրացած ու հոգնած զինծառայողները համալրում են դասալքների բանակը:

Բոլորովին անհասկանալի է, արդյո՞ք դա կհանգեցնի «շրջադարձային կետի» այն իմաստով, որը մարդիկ ակնկալում են: Ուկրաինայի հարվածային կարողությունները և այն, որ Ռուսաստանը նախապատվությունը տալիս է ցրված, սրընթաց գրոհների կազմակերպմանը, սահմանափակում են խոշոր ճեղքումների ներուժը: Այնուամենայնիվ, այն, ինչ մենք տեսանք վերջին երեք ամիսների ընթացքում Հարավային Դոնեցկի ուղղությամբ, պատկերացում է տալիս, թե ինչ է մեզ սպասվում: Հյուծված ուժերը անշեղորեն նահանջում են, նրանք դուրս են մղվում իրենց հենակետերից և աղվում են, և չնայած նրանց նահանջը պաշտպանում են ԱԹՍ-ները՝ դիրքերը կորցնում են դիրքերի հետևից: Առաջնագիծը պահպանում են այնքանով, որքանով կարողանում են:

Վերջին բնագիծը: ATACM-ները, JASSM-ները և Орешник-ը

Մարտի դաշտում կենսունակությունը պահպանելու Ուկրաինայի կարողությունը կախված է երկու անփոխարինելի ռեսուրսների հարաբերակցությունից: Առաջինը՝ ուկրաինական զորահավաքի ռեսուրսից և երկրորդ՝ արևմտյան կարևորագույն սպառազինության մատակարարումից, որոնք նրան մարտունակ են դարձնում: Մենք գնահատեցիք առաջին գործոնը: Այնպես չէ, որ Ուկրաինան մարդկանց պակաս ունի, պարզապես զորահավաքի ծրագրի իրականացման միտումները ցանկալի է, որ դրական արդյունքներ թողնեն, մինչդեռ անձնակազմի պակասն աճում է: Երկրորդ գործոնի առնչությամբ միտումները, թերևս, ավելի մտահոգիչ են Կիևի համար:

Եվ այսպես ուրվագծվել է երկու ընդհանուր միտում, որոնցից ոչ մեկը լավատեսական պատկեր չի ստեղծում: Որոնք են դրանք.

1. Վերջին ամիսներին ծանր սպառազինության մատակարարումները Ուկրաինա (տանկեր, ՀՄՄ և հրետանային միջոցներ) զգալի չափով կրճատվել են:
2. Արևմուտքի մոտ, ըստ էության, սպառվել են էսկալացիայի միջոցները (հարվածային համակարգերը), որոնք նա կարող էին տրամադրվել: Իսկ այն համակարգերը, որոնք արդեն տրամադրվել են, չեն կարողացել էապես փոխել պատերազմի ընթացքը:

2023 թվականին նպատակը նոր մեքենայացված ստորաբաժանումների ստեղծումն էր, իսկ Պենտագոնը գլխավորելով բազմազգ ջանքերը պետք է ստեղծեր մի ամբողջ բանակային կորպուս բաղկացած «Leopard»-ների, «Challenger»-ների և մի

շարք արևմտյան ՀՄՄ-ների ու զրահափոխադրիչների ստորաբաժանումներից: Բայց, երբ սիրով հավաքված խմբավորումը Զապորոժիեի ուղղությամբ անհաջող հարձակման ժամանակ գլուխը կոտրեց պատին հարվածելով, Միացյալ Նահանգները, Ուկրաինայի տանկային զորքերին աջակցելու համար, ուշացումով և դժկամությամբ ուղարկեցին իրենց սեփական «Abrams»-ները: Սակայն 2024 թվականին ծանր սպառազինության մատակարարումները կրճատվեցին և հասան նվազագույնի:

Ուկրաինայում տանկերի դերը հիմնականում սխալ է ընկալվել: Տանկերի խոցելիությունը ժամանակակից մարտադաշտի անհամար հարվածային համակարգերի պայմաններում որոշ դիտորդների ստիպեց պնդել, որ տանկը որպես զենքի համակարգ հնացել է, բայց դա իրականում հակասում է այն փաստին, որ այս պատերազմում երկու կողմերն էլ ձգտում էին մարտադաշտ դուս գալ հնարավորինս շատ տանկերով: Ճիշտ է, տանկերին անհրաժեշտ են առավել կարևոր օժանդակ միջոցներ՝ ավելի շատ մարտական ինժեներիա, հակաօդային պաշտպանություն և ՌԷՊ, բայց նրանք դեռևս անփոխարինելի դեր են խաղում և շարունակում են մնալ կարևոր տարր այս պատերազմում: 2023 թվականին Ուկրաինայի հակահարձակման ձախողումը ցույց տվեց, ամեն դեպքում, որ տանկերը պարզապես ոչ թե «խաղի կանոնները փոխող» համակարգեր են, այլ զանգվածային սպառման առարկաներ, դա միշտ էլ այդպես է եղել: Sherman-ի և T-34-ի նման խորհրդանշական տանկերի տարբերակիչ առանձնահատկությունը նրանց մեծ քանակությունն էր:

Ցավոք, Ուկրաինային տանկերով մատակարարումները կտրուկ նվազեց 2023 թվականի անհաջողություններից հետո: 2024 թվականին Ուկրաինային ԱՄՆ մատակարարումների կրճատումը գրեթե ամբողջությամբ զուրկ էր զրահատեխնիկայից: Քիլի ինստիտուտի տվյալներով, որոնք ուշադիր հետևում են սպառազինությունների մատակարարման պարտավորություններին, հաստատվում է, որ 2024 թվականին ծանր սպառազինությունների մատակարարումը կտրուկ նվազել է: 2023 թվականին Ուկրաինայի հովանավորները խոստացել էին տրամադրել 384 տանկ: 2024 թվականին այս ցուցանիշը հասավ ընդամենը 98-ի:

Թեև 2023 թվականը ամբողջությամբ նվիրված էր Ուկրաինայի մեքենայացված համալիրի ստեղծմանը, որը ներառում էր տանկեր, ՀՄՄ-ներ և ինժեներական տեխնիկա, 2024 թվականը հիմնականում նվիրված էր Ուկրաինայի հարվածային ներուժի բարձրացմանը: Խաղի մեջ մտան երկու առանձին տարրեր. նախ՝ օդային և ցամաքային բազավորման համակարգերի մատակարարումը (առաջին հերթին՝

համապատասխանաբար բրիտանական Storm Shadows-ը և ամերիկյան ATACMS-ը), և երկրորդ՝ մարտական գործողությունների վարման կանոնների մեղմացումը, որը թույլ կտար Ուկրաինային հարվածներ հասցնել նախապատերազմական Ռուսաստանի տարածքում գտնվող թիրախներին:

Ինչպես պարզվեց, դա կապված էր Կուրսկում ուկրաինական օպերացիայի հետ, և շատ առումներով Կուրսկի ներխուժման ամենաանմիջական հետևանքը, որ ստիպեց Արևմուտքին պահպանել մարտական գործողություններ վարելու կանոն-ները: Մինչ Ուկրաինան հարվածներ էր հասցնում Ռուսաստանի տարածքին օգտագործելով հայրենական արտադրության համակարգերը, առաջին հերթին՝ ԱԹՍ-ները, Սպիտակ տունը շարունակում էր ձգձգել ամերիկյան համակարգերի կիրառման պաշտոնական հավանությունը: Կուրսկում ցամաքային հարձակում սկսելով Ուկրաինան նրանց փոխարեն որոշում կայացրեց: Միացյալ Նահանգները թույլտրեցին Atacms համակարգերը կիրառել միայն զորքերի առաջխաղացմանը աջակցելու համար, իսկ դա հանգեցրեց համակարգերի ամբողջ սպեկտրով Ռուսաստանին հարվածելու լիցենզիայի: Սա դարձավ սուր հիշեցում, որ որքան էլ մենք պատկերացնենք վստահելի անձի և հովանավորի միջև հարաբերությունները, Ուկրաինան որոշակի կարողություն ունի ճնշում գործադրելու Ամերիկայի վրա: Դասական օրինակը՝ երբ պոչն է դես ու դեն թափահարում շանը:

Ամեն դեպքում, 2024 թվականին Ուկրաինան և նրա արևմտյան հովանավորները դանդաղ, բայց հաստատապես հատեցին այս ոլորտի բոլոր ենթադրյալ «կարմիր գծերը»: Առաջինը դրանք հատեցին բրիտանացիները՝ 2023 թվականի վերջին մատակարարելով Storm Shadows-ները, որին հաջորդեց atacms-ների մատակարա-րումը (մի քանի F16-ով), և, վերջապես, մարտական գործողությունների վարման կանոնների թուլացումը՝ Ռուսաստանին ուղիղ հարվածներ հասցնելու նպատակով:

Ու՞ր է մեզ տանում սա: Թվում է, թե պետք է հաշվի առնել երեք կարևոր կետ:

1. Արևմուտքը, ըստ էության, հասել է իր էսկալացիայի շղթայի ավարտին: Մնացած միակ քայլը, որ նրանք կարող են ձեռնարկել, կլինի Ուկրաինային JASSM (Joint Air-to-Surface Standoff Missile) հրթիռների մատակարարումը, ինչը կնշանակի Ուկրաինայի հարվածային կարողության քանակական, բայց ոչ էական որակական բարձրացում:

2. Ուկրաինայի կողմից Արևմուտքի տրամադրած հարվածային միջոցների օգտագործումն անարդյունավետ էր և էապես չբարելավեց իրավիճակը տեղերում:

3. Ռուսաստանը պահպանում է գերիշխող հարվածային առավելությունը՝ թե՛ որակական, և թե՛ քանակական առումով:

Ուկրաինան հարվածային հնարավորությունների առումով, համեմատած Ռուսաստանի, բախվում է լուրջ խնդիրների: Ռուսական հարվածային միջոցները շատ ավելի բազմաթիվ են և զգալի առավելություններ ունեն հեռահարության առումով: Բայց այդ կարևոր է նաև հաշվի առնել, որ Ռուսաստանը ունի զգալիորեն ավելի մեծ ռազմավարական խորություն և ավելի խիտ ու համեմատաբար անխոցելի հակաօդային պաշտպանություն: Ի տարբերություն Ուկրաինայի, որի հակաօդային պաշտպանությունը հասցվել է սահմանին՝ արձակման կայանների և կալանիչների աճող պակասի պատճառով, Ռուսաստանի ՀՕՊ-ը գործնականում չի տուժել:

Հաշվի առնելով այս հիմնական հաշվարկը՝ արևմտյան հարվածային համակարգերի օգտագործումը «հարված՝ ի պատասխան հարվածի» ռազմավարական օդային արշավ իրականացնելու համար Ուկրաինայի համար վատ մաթեմատիկա է: Որպես կանոն, անմիտ է մահակներով մարտի բռնվել, երբ ձեր հակառակորդը ավելի խոշորամարմին է, և նրա մահակը շատ ավելի երկար է: Փոխարենը, Ուկրաինայի հարվածային համակարգերը պետք է օգտագործվեն ցամաքային օպերացիաներին աջակցելու համար՝ հարվածները կենտրոնացնելով տարածության և ժամանակի մեջ, դրանք միավորելով ցամաքային ջանքերին: Որպես պարզ մտքի փորձ, դժվար չէ պատկերացնել, որ ATACMS-ը կարող էր ինչ-որ բան փոխել, եթե դրանք հասանելի լինեին 2023 թվականին և օգտագործվեին Զապորոժիեի ռազմաճակատի գրոհի ժամանակ ռուսական թիկունքային տարածքները խոցելու համար՝ հարվածների հասցնումը համակցելով մեքենայացված ստորաբաժանումների հարձակողական տեմպերին, որպեսզի խափանեին ռուսական հրամանատարությունն ու վերահսկողությունը և կանխեին լրացուցիչ ուժերի տեղափոխումը կրիտիկական կարևոր շրջաններ:

Փոխարենը, Ուկրաինայի հարվածային ներուժը հիմնականում վատնվեց այնպիսի հարվածներով, որոնք երբեմն, ճիշտ է, հաջողության էին հասնում ռուսական օբյեկտների խոցման գործում, բայց չէին կարող ուղղակիորեն ազդել ցամաքային օպերացիաների հաջող ավարտին: Արդյունքը Ուկրաինայի հարվածային հզորության փոշիացումն էր, որն ավելի քիչ է, քան դրա բաղադրիչների գումարը: Այժմ Ուկրաինան գործնականում սպառել է հրթիռները: ԱՄՆ-ի կողմից ուղարկված 500 ATACMS հրթիռներից Կիևի պահեստներում մնացել է, հնարավոր է, 50-ը: Storm Shadow օդային հրթիռների պաշարները նույնպես քիչ են, իսկ Մեծ Բրիտանիայի պարտավորությունները սահմանափակված են պաշարները համալրելու համար «մի քանի տասնյակով»:

Արևմուտքի համար ուկրաինական հարվածային ներուժին աջակցելու վերջին տարբերակը ամերիկյան JASSM հրթիռներն են: Չնայած արտադրության մեջ կա ընդլայնված տիրույթի տարբերակ (JASSM-ER կամ Extended Range), դրանք համեմատաբար նոր են, թանկ են և նախատեսված են ամերիկյան պահեստների համար, ուստի ենթադրվում է, որ ուկրաինացիները կստանան ստանդարտ տարբերակը: Ստանդարտ JASSM-ն Storm Shadows-ի և ATACMs-ի նկատմամբ ունի մի փոքր առավելություն հեռավորության մեջ, որը կազմում է մոտավորապես 230 մղոն: Այն դեպքում, եթե JASSM-ները չեն տրամադրվում, կա ավելի փոքր հեռահարության (մոտ 170 մղոն) համակարգ, որը կոչվում է SLAM (Standoff Land Attack Missile): Եվ JASSM-ը, և SLAMs-ը կարող են կրել ուկրաինական F-16 կործանիչները:

JASSM-ի մասին պետք է նշել երկու հանգամանք ևս: Նախ, JASSM-ի փոքր-ինչ ավելի մեծ հեռահարությունը, ըստ էության, կծառայի որպես աջակցություն / փոխարինում ATACM-ի արագ սպառվող հրթիռներին և, մասնավորապես, օդային բազավորման Storm Shadows-ին, որոնք կարող են կիրառել F-16 կործանիչները: Իհարկե սա չի նշանակում, որ Ուկրաինայի մարտունակությունը կտրուկ կբարձրանա, փոխարենը պարզապես կնպաստի հարվածային նվազագույն ներուժի պահպանմանը:

Երկրորդ, դուք պետք է հասկանաք, որ JASSM-ը վերջին կանգառն է: Հիմա մենք մտնում ենք ոչ թե արհեստականորեն կառուցված կարմիր գծերի, այլ ֆիզիկական և իրական սահմանների տարածք: Ռուսաստանը, ըստ էության, կլանել է ATACM և Storm Shadows համակարգերի բոլոր առկա պաշարները, ինչը գրեթե չի ազդել նրա մարտունակության վրա, իսկ JASSM-ը Ուկրաինական հարվածային ուժերի մարտունակությունը պահպանելու վերջին հանգրվանն է, որը մնացել է զինանոցում: Մենք գտնվում ենք օգնության սանդուղքի վերջին աստիճանին:

Սակայն, JASSM-ների դեպքում ԱՄՆ-ն զգալի թերություններ ունի: Սա կարևոր օրինակ է առ այն, թե ինչպես են բոլոր ձվերը դասավորվում մեկ տեխնոլոգիական զամբյուղում: 2020 թվականին Միացյալ Նահանգները հրաժարվեցին մշակել սովորական սպառազինությամբ հեռահար շառավղով հրթիռներ, JASSM-ը վերածելով, մասնավորապես, բարձր հեռահարության հրթիռների նոր տարբերակների, որը ապագա հակամարտություններում՝ հատկապես Խաղաղ օվկիանոսում, նախատեսված է վճռական դեր խաղալու: Սա JASSM-ին դարձնում է չափազանց զգայուն համակարգ, որը հանդիսանում է ամերիկյան հարվածային ներուժի կենտրոնական մասը, հատկապես հաշվի առնելով տարեկան մի քանի տասնյակ միավոր արտադրվող Tomahawk համակարգի արդիականացումը:

Հաշվի առնելով այն փաստը, որ JASSM համակարգերը կառավարվում են GPS-ի միջոցով, իրական պատճառներ կան չշտապելու Ուկրաինային տրամադրել տեխնոլոգիապես զգայուն այդպիսի համակարգ: Ռուսական ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգը զգալի հաջողությունների է հասել GPS-ը ճնշելու և նմանատիպ կառավարմամբ ամերիկյան համակարգերը շարքից հանելու գործում: Եթե թույլ տանք, որ ռուսները ծանոթանան ամերիկյան առանցքային համակարգին, դա կարող է վնասել Պենտագոնի ռազմական պլանավորմանը: «Հարվածային ձվերի» մեծ մասը, եթե ոչ բոլորը, այդ զամբյուղում են, ուստի ի՞նչու թույլ տալ, որ թշնամին ներս նայի:

Ուսատի այն, ինչ մենք տեսել ենք մինչ այժմ, հավանական է, որ այդ մտահոգությունները ի վերջո կցրվեն, և Ուկրաինան կստանա JASSM-ները, որոնք կաջակցեն

հարվածային հնարավորություններին, բայց հաշվի առնելով ուկրաինական F-16 կործանիչների հավաքակայանի չափը, շրջանակը սահմանափակ կլինի:

Իհարկե, դա երբեք Ուկրաինային հնարավորություն չի տա հարվածային հզորությամբ հավասարվել Ռուսաստանին: Անվերջ խոսակցություններից առ այն, որ Ռուսաստանում վերջանում են հրթիռները, նրանք ի վերջո հանգեցին այն եզրակացության, որ դա պարզապես ճիշտ չէ, և իրականում երբեք էլ այդպես չի եղել: Վերջերս ուկրաինական ռազմական հետախուզությունը խոստովանել է, որ իրենց գնահատմամբ Ռուսաստանն իր պաշարներում պահպանում է մոտ 1400 հեռահար հրթիռ, իսկ ամսական արտադրությունը կազմում է մոտ 150 միավոր: Ռուսական էժան «Герань» ԱԹՍ-ների արտադրությունը նույնպես կտրուկ աճել է, և գնահատվում է ամսական 2000 միավոր:

Հարցեր են առաջանում նաև ռուսական նոր հրթիռային համակարգի՝ հայտնի դարձած «Орешник»-ի վերաբերյալ: 2024 թվականի նոյեմբերի 21-ին Ռուսաստանը փորձարկել է «Орешник» համակարգը Դնեպրի խոշոր գործարանում, ինչը թույլ է տվել գնահատել համակարգի հիմնական հնարավորությունները: «Орешник»-ը միջին հեռահարության բալիստիկ հրթիռ է, որը բնութագրվում է հիպերձայնային հնարավորություններով (գերազանցում է 10 Mах-ը) և վեց առանձին մարտագլխիկներով հագեցած բաժանարար կրիչով, որոնցից յուրաքանչյուրում կարող են գտնվել ենթազինամթերքներ: Չնայած Դնեպրի վրա հարձակումը, ըստ էության, ցուցադրություն էր՝ օգտագործելով իներտ ուսումնական մարտագլխիկներ (այսինքն՝ առանց պայթուցիկ նյութերի), հրթիռը կարող է համալրվել միջուկային կամ սովորական մարտագլխիկներով:

Ինչպես Կուրսկի աղեղում Հյուսիսային Կորեայի զորքերի դեպքում, ես ավելի շուտ կարծում եմ, որ «Орешник»-ի գործարկումը ոչ մի տեղ այնքան կարևոր չէ, որքան թվում է: Համակարգը թանկ է և, հավանաբար, սովորական օգտագործման

համար պրակտիկ չէ: Ես հասկանում եմ «Орешник»-ը որպես չափազանց հզոր սովորական զենք պատկերացնելու ցանկությունը, որը թիրախ է հարվածում կես տասնյակ մարտագլխիկներով՝ «Калибр» հրթիռների մի ամբողջ համազարկով, բայց դրա հետ կապված մի քանի խնդիրներ կան: Համակարգի ճշգրտությունը (կամ, տեխնիկական լեզվով «շրջանաձև հավանական սխալականությունը») շատ ավելի համահունչ է միջուկային զենքի համակարգին, քան սովորականի: Բացի այդ, սովորական հարվածներ հասցնելու համար ՄՀԲՀ-ի օգտագործման հետ կապված խնդիրը սխալ հաշվարկի վտանգի տակ է: Օտարերկրյա հակառակորդները կարող են սխալ մեկնաբանել գործարկումը, համարելով միջուկային հարձակում և համապատասխան արձագանք ցուցաբերել: Ահա թե ինչու Ռուսաստանի կառավարությունը, ըստ էության, նախապես նախազգուշացրեց Միացյալ Նահանգներին գործարկման մասին, որը ցուցադրման հիանալի միջոց էր, բայց անիրագործելի է զենքի համար, որը նախատեսված է կանոնավոր օգտագործման համար:

Մենք կարող ենք ականատես լինել Ուկրաինայի դեմ "Орешник"-ի ևս մեկ կիրառման, բայց վերջին հաշվով դա դժվար թե համակարգային հետևանքներ ունենա այս պատերազմում: Դնեպրի ցույցադրությունը, ամենայն հավանականությամբ, ազդանշան էր Եվրոպային՝ հիշեցնելու ՆԱՏՕ-ին, որ Ռուսաստանն ունի եվրոպական թիրախներին հարվածներ հասցնելու ներուժ, որոնք հնարավոր չէ որսալ: Այն նաև ծառայում է որպես դառը հիշեցում, որ Եվրոպան չունի համարժեք հնարավորություններ և, ըստ էության, ցույց է տալիս Ռուսաստանի կարողությունը հրթիռներ արձակել ուկրաինական կամ եվրոպական պատասխան գործողությունների շառավղից շատ հեռու: «Орешник»-ը վառ հիշեցում է Ռուսաստանի ռազմավարական խորության և Ուկրաինայում նրա հարվածային գերակայության մասին:

Ի վերջո, Ուկրաինան պարտվելու է այս հարվածային խաղում: Նրա հարվածային ներուժը նվազել է այն պատճառով, որ հրթիռները մսխվել են ոչ համակարգային օդային արշավի ընթացքում, թեև Storm Shadow և ATACMs համակարգերի պաշարների սպառումը կարող է որոշ չափով փոխհատուցվել JASSMs-ներով, այնումանենայնիվ, Ուկրաինան պարզապես չունի այն հեռահարությունը կամ քանակությունը, որոնք անհրաժեշտ են Ռուսաստանի հնարավորություններին համապատասխանելու համար: Ստիպված լինելով ավելին անել ավելի քիչ գումարով՝ Ուկրաինան փոխարենը փոշիացրեց իր ուժերն ու միջոցները և չկարողացավ համատեղել իր հարվածները ցամաքային գործողությունների հետ: Այժմ մենք ճանապարհի ամենավերջում ենք՝ JASSMs-ներից հետո արևմտյան պահեստներում ոչինչ չի մնացել, որը կարող է բարելավել Ուկրաինայի հնարավորությունները: «Орешник»-ով թե առանց դրա, Կիևի շանսերը մահակներով այս մենամարտում վատ են:

Եզրակացություն. Կործանիչ պարտություն

Նորությունների անվերջ ցիկլով, FPV համակարգերի հարվածների և պայթող ԱԹՍ-ներ ամենօրյա կադրերով, ինչպես նաև պատերազմի քարտեզագրողների բարեխիղճ աշխատանքով, որոնք մեզ տեղեկացնում են յուրաքանչյուր 100 մետր առաջ շարժվելու մասին զավթված, մենք հեշտությամբ կարող ենք զգալ, որ ռուս-ուկրաինական պատերազմը հայտնվել է ճակատագրի անվերջանալի շրջա-

պտույտում, որը երբեք չի ավարտվի՝ կարծես «Խելագար Մաքս»-ը «Արջամկան օր»-ում:

Ընդսմին, ես փորձեցի ցույց տալ, որ 2024 թվականին իրականում տեղի են ունեցել մի քանի շատ կարևոր իրադարձություններ, որոնք համեմատաբար պարզ են դարձնում պատերազմի առաջիկա բնույթը: Համառոտ ամփոփենք:

1. Ռուսական զորքերը խորը ճեղքեցին ուկրաինական պաշտպանությունը ճակատի կրիտիկական առանցքի երկայնքով: Երկար տարիների անգործությունից հետո Ուկրաինայի դիրքերը Դոնեցկի հարավում պայթեցվեցին: Ռուսական զորքերը առաջ են շարժվում ամրացված դիրքերի մի ամբողջ գոտիով՝ առաջ մղելով ճակատը դեպի Պոկրովսկ և Կոնստանտինովկա:

2. Ուկրաինական գլխավոր ցամաքային գամբիտը (Կուրսկ ներխուժումը) ձախողվեց, և հիմնական դիրքերն աստիճանաբար թուլացան: Կարևորագույն մեքենայացված միավորումների մի ամբողջ խմբավորում տարվա մեծ մասը վատնեց պայքարելով այս անարդյունավետ և երկրորդական ճակատում, ինչի արդյունքում Դոնբասում ուկրաինական դիրքերն ավելի ու ավելի հյուծվեցին և զրկվեցին պահուստներից:

3. Ուկրաինական կառավարության զորահավաքային ծրագիրն ակտիվացնելու փորձը ձախողվեց, և բանակ զորակոչվելն արագորեն փոշիացավ: Զինված ուժերի կառուցվածքի ընդլայնման մասին որոշումները սաստկացրեց անձնակազմի պակասը, և արդյունքում արագացավ ուկրաինական առաջնագծի բրիգադների փլուզումը:

4. Արևմուտքի կողմից Ուկրաինայի հարվածային հնարավորությունների երկար սպասված թարմացումը չկարողացավ տապալել Ռուսաստանի հարձակումը, իսկ ATACM և Storm Shadows համակարգերի պաշարները գրեթե սպառվել են: Ներկայումս քիչ տարբերակներ են մնացել Ուկրաինայի հարվածային կարողություններին աջակցելու համար, և Ուկրաինայի համար պատերազմի այս հարթությունում գերակայությունը նվաճելու հեռանկարներ չկան:

Մի խոսքով, Ուկրաինան դիմադրելու իր կարողության լիակատար սպառման պատճառով *դեբելյացիայի*՝ պարտության ճանապարհին է: Դա այն չէ, որ նա զրկված է մարդկային ռեսուրսներից, տեխնիկայից և հրթիռներից, բայց այս բոլոր ցուցանիշներն ուղղված են դեպի ներքև: Ուկրաինայի ռազմավարական պարտությունը, որը ժամանակին անհավանական էր Արևմտյան արտաքին քաղաքական ապարատի և մեկնաբանների համար, այժմ օրակարգում է: Շատ հետաքրքիր է, որ հիմա, երբ Դոնալդ Թրամփը պատրաստվում է վերադառնալ Սպիտակ տուն, ուկրաինական պարտության մասին խոսելը հանկարծ ընդունելի դարձավ: Ռոբերտ Կագանը՝ Ուկրաինայի ամենահամառ աջակիցը, այժմ բարձրաձայն ասում է այն, ինչի մասին չեն խոսում:

Ուկրաինան, ամենայն հավանականությամբ, կպարտվի պատերազմում առաջիկա 12-18 ամիսների ընթացքում: Ուկրաինան կպարտվի ոչ լավ ձևով, բանակցությունների միջոցով՝ զոհաբերելով կենսական տարածքներ, բայց կպահպանի անկախությունը, ինքնիշխանությունը և կգտնվի անվտանգության արևմտյան երաշխիքների պաշտպանության ներքո: Փոխարենը նրան սպառնում է լիակատար պարտություն, ինքնիշխանության կորուստ և Ռուսաստանի լիակատար վերահսկողություն:

Իսկապես:

Այս ամենը չպետք է մեծ զարմանք առաջացնի: Այդ հարցում ցնցողը, իմ դիրքորոշումն է, որ Ռուսաստանը, ըստ էության, շատ հզոր երկիր է, որ դժվար թե պարտվի պատերազմում, (որը նա ընկալում է որպես էքզիստենցիալ) իր իսկ որովայնում, ինչ-որ կերպ դարձել է հակասական կամ մարգինալացված: Բայց ահա մենք այստեղ ենք:

Carthago delenda est

https://bigserge.substack.com/p/total-kievan-debellation?utm_source=post-email-title&publication_id=1068853&post_id=153986572&utm_campaign=email-post-title&isFreemail=true&r=212oc2&triedRedirect=true&utm_medium=email